ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության 2018-2019 թթ. պետական բյուջեների եկամուտների վերաբերյալ (հունվար-օգոստոս)

<< 2019 թվականի պետական բյուջեի եկամուտները (մլրդ դրամ)



<< 2018-2019թթ. պետական բյուջեների եկամուտները (մլրդ դրամ)







<< 2019 թ. պետական բյուջեի հունվար-օգոստոս ամիսների եկամուտները կազմել են 997.4 մլրդ դրամ, որը կազմում է 2019թ. պետական բյուջեի ինն ամսվա հաստատված ծրագրային ցուցանիշի **91.9%**-ը: 2019թ. հունվար-օգոստոսի եկամուտները **178.4** մլրդ դրամով, կամ **21.8%**-ով ավել են քան 2018թ. հունվար-օգոստոսի եկամուտները:

Հարկային եկամուտները և պետական տուրքերը 2019թ. հունվար-օգոստոսին կազմել են **937.4** մլրդ դրամ, որը 2019թ. պետական բյուջեի ինն ամսվա հաստատված ծրագրային ցուցանիշի **92%**-ն է: 2018թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ հարկային եկամուտները և պետական տուրքերը **ավել են 164.7 մլրդ** դրամով, կամ **21.3%**-ով:

Պաշտոնական դրամաշնորհները 2019թ. հունվար-օգոստոսին կազմել են 7.7 մլրդ դրամ, որը 2019թ. պետական բյուջեի ինն ամսվա հաստատված ծրագրային ցուցանիշի 31.8%-ն է: 2019թ. հունվար-օգոստոսի պաշտոնական դրամաշնորհները 2018թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ ավել են **1.1** մլրդ դրամով, կամ **16.7%**-ով:

Պետական բյուջեի այլ եկամուտները 2019թ. հունվար-օգոստոսին կազմել են **52.3 մլրդ** դրամ, որը 2019թ. պետական բյուջեի ինն ամսվա հաստատված ծրագրային ցուցանիշի **126.3%**-ն է, կամ **ավել է 10.9 մլրդ** դրամով: Այլ եկամուտները 2018թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ ավել են **12.5** մլրդ դրամով կամ **31.4%**-ով:

Պետական բյուջեի եկամուտները ավելացված արժեքի հարկի գծով 2019թ. հունվար-օգոստոսին կազմել են 345.6 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ **ավել է 77.2 մլրդ** դրամով, կամ **28.8%**-ով:

Ակցիզային հարկի գծով եկամուտները 2019թ. հունվար-օգոստոսին կազմել են 83.1 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ ավել է **16.9** մլրդ դրամով կամ **25.5%**-ով: Ընդ որում, հանրապետություն ներմուծվող ենթակացիզային ապրանքների հարկումից եկամուտները կազմել են 31.3 մլրդ դրամ, կամ 2018թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ 3.3 մլրդ դրամով ավել, իսկ հանրապետությունում արտադրվող ենթակացիզային ապրանքների հարկումից 2019թ. հունվար-օգոստոսին ստացվել է 51.9 մլրդ դրամ, ինչը 2018թ. համեմատությամբ ավել է **13.7** մլրդ դրամով կամ 35.9%-ով:

2019 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում շահութահարկի և բնապահպանական ու բնօգտագործման վճարների ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 175.0 մլրդ դրամ և 35.0 մլրդ դրամ, իսկ 2018 թվականին համապատասխանաբար 108.6 և 35.4 մլրդ դրամ: Այսինքն, շահութահարկի գծով եկամուտների ցուցանիշը 2019թ.-ին 2018թ-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ **աճել է 66.4 մլրդ** դրամով, կամ **61.1 %**-ով, իսկ բնապահպանական ու բնօգտագործման վճարների ցուցանիշը նվազել է 0.4 մլրդ դրամով, կամ 1.1%-ով:

Եկամտային հարկի գծով 2019թ. հունվար-օգոստոսին արձանագրվել է 300.2 մլրդ դրամի եկամուտ, ինչը 2018թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ **ավել է 70.8 մլրդ** դրամով կամ **30.9%**-ով:

Մաքսատուրքերի գծով եկամուտները 2019թ. հունվար-օգոստոսին կազմել են 57.5 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ **աճել է 4.3 մլրդ դրամով** կամ 8.1%-ով:

Շրջանառության հարկի գծով 2019թ. հունվար-օգոստոսին արձանագրվել է 22.9 մլրդ դրամի եկամուտ՝ 2018թ. հունվար-օգոստոսի 14.0 մլրդ դրամի դիմաց: **Աճը կազմել է 63.6% կամ 8.9 մլրդ դրամ**:

Սոցիալական վճարների գծով ևս առկա է որոշակի աճ, 2019թ. հունվար-օգոստոսին արձանագրվել է 12.4 մլրդ դրամի եկամուտ, 2018թ. հունվար-օգոստոսի 12.1 մլրդ դրամի դիմաց:

2019թ. հունվար-օգոստոսին պետական տուրքերի գծով եկամուտները կազմել են 24.7 մլրդ դրամ, ինչը 2018թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ **ավել է 3.0 մլրդ** դրամով, կամ **13.8%**-ով:

Այլ հարկային եկամուտների գծով 2019թ. հունվար-օգոստոսին արձանագրվել է 17.6 մլրդ դրամ եկամուտ, ինչը 2018թ. համեմատությամբ պակաս է 1.1 մլրդ դրամով:

2019թ. հունվար-օգոստոսին արձանագրվել են 27.3 մլրդ դրամի արտաբյուջետային եկամուտներ, ինչը 2018թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ **ավել է 5.8 մլրդ դրամով, կամ 27%**-ով:

2019 թվականի հունվար-օգոստոսին տնտեսավարողների կողմից վճարված գերավճարների վերադարձի և այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցված գումարները կազմել են 136.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա շուրջ 55.1 մլրդ դրամի դիմաց: